# ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մայիսի 29-ի ՀՕ-59 օրենքի 32-րդ հոդվածում 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ մասեր.

«16 տարին լրացած հոգեկան առողջության խնդիր ունեցող երեխան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իրավունք ունի տալ գրավոր իրազեկված համաձայնություն բժշկական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ, եթե՝

1) բժշկի կարծիքով երեխան ունակ է հասկանալու բժշկական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետևաքները,

2) այդ տեղեկությունները չեն վնասի երեխային,

3) կդյուրացնեն նրան բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը:

16 տարին լրացած երեխայի գրավոր իրազեկված համաձայնությունը տրվում է նրա օրինական ներկայացուցչի կողմից, եթե բացակայում են սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանները:

16 տարին չլրացած երեխայի գրավոր իրազեկված համաձայնությունը տրվում է նրա օրինական ներկայացուցչի կողմից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

16 տարին չլրացած երեխայի հոգեբուժական օգնությունը և սպասարկումը իրականացնելիս նրա կարծիքը լսելը պարտադիր է,  եթե առկա են սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:»: